Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2021-2022 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն *(20 միավոր)*

1. Ո՞ր թվականներին է գահակալել Սարդուրի II-ը. 0,5 մ.
   ա) Ք.ա. 835-825 թթ. բ) Ք.ա. 810-786 թթ. գ) Ք.ա. 786-764 թթ. դ) Ք.ա. 764-735 թթ.
2. Ո՞վ է «Աղանդների հեքումը» աշխատության հեղինակը. 0,5 մ.
   ա) Դավիթ Անհաղթ բ) Եզնիկ Կողբացի գ) Գրիգոր Տաթևացի դ) Վահրամ Ռաբունի
3. Ո՞ր երկրամասում էր գտնվում Սամոսատ քաղաքը. 0,5 մ.
   ա) Կոմմագենե բ) Փոքր Հայք գ) Կապադովկիա դ) Ասորիք
4. Ո՞ր իշխանական տան ներկայացուցիչների նստավայրն էր Գագ ամրոցը. 0,5 մ.
   ա) Կյուրիկաններ բ) Վաչուտյաններ գ) Վահրամյաններ դ) Դոփյաններ
5. Ե՞րբ է Ապլղարիպ Արծրունին նշանակվել Կիլիկիայի կառավարիչ. 0,5 մ.
   ա) 1042 թ. բ) 1072 թ. գ) 1082 թ. դ) 1024 թ.
6. Քանի՞ տարով է կնքվել Մծբինի հռոմեա-պարսկական հաշտության պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 7 բ) 40 գ) 10 դ) 100
7. Ո՞ր քաղաքում է ստեղծվել «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը. 0,5 մ.
   ա) Ղարաքիլիսա բ) Ալեքսանդրապոլ գ) Կարին դ) Վան
8. Ե՞րբ է ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեն. 0,5 մ.
   ա) 1988 թ. փետրվարի 20 բ) 1988 թ. հունիսի 15 գ) 1988 թ. փետրվարի 22 դ) 1988 թ. հուլիսի 18
9. Ե՞րբ է կազմակերպվել Հայաստանի կերպարվեստի թանգարանը: 0,5 մ.
10. Ո՞ր դիվիզիայի հրամանատարն էր Կերչի մարտերում զոհված գնդապետ Սիմոն Զաքյանը: 0,5 մ.
11. Ո՞վ է դարձել Հայաստանի պետական համալսարանի առաջին ռեկտոր: 0,5 մ.
12. Կերպարվեստի ո՞ր ճյուղի ներկայացուցիչ է Երվանդ Քոչարը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարության հրաժարականը
    բ) Առաջին Հանրապետության նոր՝ ընտրովի խորհրդարանի ձևավորումը
    գ) Թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունների վերսկսումը Բաթումում
    դ) Թուրք-թաթարական խռովությունների ճնշումը
    ե) Հայաստանի բոլշևիկների կազմակերպած Մայիսյան ապստամբության պարտությունը
    զ) Անդրկովկասյան Հանրապետության (ԱԺԴՀ) և Անդրկովկասյան Սեյմի կազմալուծումը
    է) Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Ներսիսյան դպրոց
    2. Լազարյան ճեմարան
    3. Աղաբաբյան դպրոց
    4. Ռափայելյան վարժարան
    5. Սանասարյան վարժարան
    6. Գևորգյան ճեմարան

1	2	3	4	5	6

    ա. Աստրախան բ. Էջմիածին
    գ. Վենետիկ դ. Թիֆլիս
    ե. Մոսկվա զ. Կարին (Էրզրում)
15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Մեծ տերությունների խորհրդաժողովում (Լոնդոն, 1921 թ. փետրվար-մարտ) հնչել է «հայկական ազգային օջախ» ստեղծելու կամ հայերին Թուրքիայում բնակության հնարավորություն տալու գաղափարը:
    բ) Խորհրդային Հայաստանում գիտության զարգացման ու գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր նշանակություն է ունեցել 1930 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմնումը:
    գ) 1921 թ. Իրաքից Խորհրդային Հայաստան է հայրենադարձվել շուրջ 3000 հայ, իսկ մինչև 1936 թ. մերձավորարևելյան ու եվրոպական մի քանի երկրներից հայրենիք են հայրենադարձվել շուրջ 42 հազար հայեր:

դ) 1920 թ. դեկտեմբերին ՀՀ-ում կատարվել է վարչական նոր բաժանում, ստեղծվել են Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի նահանգները:
ե) 1921 թ. ապրիլի 2-ին ավելորդ զոհեր տալուց և արյունահեղությունից խուսափելու նպատակով խորհրդային զորքերը դիմադրություն ցույց չեն տվել ապստամբներին ու հեռացել են Երևանից:
զ) 1922 թ. մարտի 12-ին Թիֆլիսում հրավիրված Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչների խորհրդաժողովը հաստատել է Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միություն (ԱԽՍՀԴՄ) ստեղծելու պայմանագիրը:
է) Ուժի ու հարկադրանքի կիրառմամբ ընթացած գյուղատնտեսության կոլեկտիվացումը Հայաստանում ավարտվել է 1930 թ., ստեղծվել են շուրջ 1000 կոլտնտեսություններ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Սև ծով դուրս գալու համար 1768-1774 թթ. Ռուսաստանի մղած պատերազմը Օսմանյան կայսրության դեմ հայտնի է «Հյուսիսային պատերազմ» անունով:
բ) Գեղարքունիքի, Ջրաբերդի, Գանձասարի, Վարանդայի ու Դիզակի մելիքություններից կազմված վարչական միավորը, որի կառավարիչն էր Դիզակի մելիք Եգանը, հայտնի է «Խամսայի մելիքություններ» անունով:
գ) 1844 թ. Թիֆլիս կենտրոնով ստեղծված Ռուսաստանյան կայսրության նոր վարչատարածքային միավոր էր Կովկասի փոխարքայությունը:
դ) Ծայրահեղ ազգայնամոլ կրոնաքաղաքական այն գաղափարախոսությունը, որի նպատակն է թուրքերի գլխավորությամբ թյուրքալեզու ժողովուրդների միավորումը մեկ պետության մեջ, պանիսլամիզմի տեսությունն է:
ե) Օսմանյան սուլթանի անձնական գվարդիայում ծառայող զինվորները, որոնք նախկինում քրիստոնյա գերիներ կամ ստրուկներ էին, հայտնի են մամլուքներ անվանումով:
զ) 1849 թ. ստեղծվել է Ռուսական կայսրության վարչատարածքային նոր միավոր՝ Երևանի նահանգը, որի մեջ մտել են Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Շուրջ մեկ տարի Հյուսիսային Կովկասում մնալուց հետո Էմինը վերադառնում է Հայաստան և հաստատվում Գետաշենում՝ Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ:
բ) 1827 թ. սեպտեմբերի 13-ին ռուսական 2-հազարանոց զորաջոկատը հայազգի գեներալ Վ. Մադաթովի գլխավորությամբ Շամքորի մոտ ջախջախել է պարսկական 10-հազարանոց զորամասը:
գ) 1806 թ. Ռուսաստանի դեմ Օսմանյան կայսրության սկսած պատերազմն ավարտվել է 1812 թ. Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով, որի կնքմանն աջակցել է հայ նշանավոր գործիչ, դիվանագետ Մանուկ բեյը:
դ) Հայ տպագրության պատմության մեջ նշանակալի իրադարձություն էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով 1771 թ. Էջմիածնում տպարան հիմնումը:
ե) Հայ իրականության մեջ ազատամիտ ուղղության նշանավոր ներկայացուցիչներից էր «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր և հրատարակիչ Ստեփանոս Նազարյանցը:
զ) 1877 թ. հունիսին թուրքական շուրջ 10-հազարանոց բանակին 23 օր շարունակ հերոսական դիմադրություն են ցույց տվել գեներալ Ա. Տեր-Ղուկասովի գլխավորած Բայազետի ռուսական կայազորն ու շրջակա հայկական գյուղերի բնակչությունը:
է) 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրով Օսմանյան Թուրքիան ձեռնամուխ եղավ իրականացնելու Կ.Պոլսում ռուսական դեսպանության աշխատակից Ա. Մանդելշտամի կազմած հայկական բարենորոգումների ծրագիրը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Արաբական իշխանությունները 804 թ. պաշտոնապես Հայոց իշխան ճանաչեցին Աշոտ Մսակեր Բագրատունուն, որն իր նստավայրը դարձրեց Դվինը:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

ա. Ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը:

բ. Ե՞րբ է պաշտոնապես հայտարարվել այս փաստաթղթի ընդունումը:

գ. Փաստաթղթի հռչակման պահին Հայաստանի կառավարությունը գլխավորած վարչապետին հետագայում՝ հրաժարականից հետո, ո՞վ փոխարինեց այդ պաշտոնում:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Հայաստանի …-րդ (1) դարի պատմությանն է իր աշխատությունը նվիրել պատմիչ Արիստակես Լաստիվերցին, իսկ … …-ն (2) շարադրել է հայոց պատմությունը քրիստոնեության ընդունումից մինչև 1260-ական թթ.: Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը) գրել է առաջին «… պատմություն» (3) աշխատությունը, որտեղ հայոց պատմությունը ներկայացվում է տարածաշրջանի և համաշխարհային պատմության ընդհանուր լուսաբանման համատեքստում:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.

Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 4900 տարեկան է, կոնկրետ ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել:

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Վարչաքաղաքական ո՞ր կազմավորումն է նրան սահմանակցում ծայր արևմուտքում:

23. Բագրատունյաց ժամանակաշրջանի հակասական ո՞ր գործիչն է պատկերված. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (կարդացե՛ք հակիրճ մեկնաբանությունը և պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն են խորհրդանշում 1920 թ. հուլիսյան այս ծաղրանկարում պատկերված երկու անձինք:

բ. Ո՞ր խորհրդաժողովի առաջադրած խաղաղության պայմանագրի պայմաններն է ոտնատակ անում կանգնած զինվորը:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ր թվականից է գահակալել Դարեհ I-ը. 0,5 մ.
   ա) Ք.ա. 550 թ. բ) Ք.ա. 525 թ. գ) Ք.ա. 522 թ. դ) Ք.ա. 486 թ.
2. Ո՞ր կուսակցությունն է 1924 թ. կազմել իր առաջին կառավարությունը Մեծ Բրիտանիայում. 0,5 մ.
   ա) պահպանողական բ) լեյբորիստական գ) սոցիալիստական դ) լիբերալ
3. Ե՞րբ է Ֆրանսիայում ընդունվել Երրորդ հանրապետության Սահմանադրությունը. 0,5 մ.
   ա) 1871 թ. բ) 1848 թ. գ) 1875 թ. դ) 1852 թ.
4. Ո՞վ է կազմակերպել Խաչակրաց 7-րդ և 8-րդ արշավանքները. 0,5 մ.
   ա) Ինոկենտիոս III բ) Լյուդովիկոս IX գ) Ֆրիդրիխ II դ) Ուրբանոս II
5. Ո՞ր երկրի զինուժն է 1941 թ. դեկտեմբերի 7-ին հարձակվել ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան Փիրլ Հարբոր ռազմակայանի վրա: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (5 X 0,2 մ.)

1. Նինվե	ա. Եգիպտոս
2. Պերսեպոլիս	բ. Խաթթի
3. Մեմֆիս	գ. Ասորեստան
4. Անտիոք	դ. Իրան
5. Խաթթուսաս	ե. Սելևկյան տերություն

1	2	3	4	5

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա) Ֆրանկական թագավորության պատմության մեջ Հայկական արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանը սովորաբար անվանում են Կարոլինգյան վերածնունդ:

   բ) Սկանդինավյան թերակղզու բնակիչները, որոնց անվանում էին նորմաններ (վիկինգներ), XI-XIII դդ. ձեռնամուխ եղան նոր տարածքների նվաճմանը:

   գ) Հարյուրամյա պատերազմում տարած հաղթանակի արդյունքում ավարտվել է Ֆրանսիայի քաղաքական միավորումը, և Ֆրանսիան դարձել է Եվրոպայի ամենամեծ ազգային պետությունը:

դ) Աբբասյան դինաստիայի օրոք հզորության գագաթնակետին հասած Արաբական խալիֆայությունը հետագա դարերում անկում է ապրել, իսկ 1258 թ. հետո դադարել է գոյություն ունենալուց:
ե) Հարավից Չինաստան ներխուժած մանջուրական ցեղերը 1544 թ. գրավել են մայրաքաղաք Պեկինը և հիմնադրել Մին կայսրությունը:
զ) Վեստֆալյան հաշտության պայմանագրով ամրագրվել է Գերմանիայի պառակտումը, ճանաչվել է Շվեյցարիայի ու Հոլանդիայի անկախությունը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Վերածննդի գրականության Ֆլորենցիայի 2 ներկայացուցիչ,
բ. Հյուսիսային Վերածննդի 2 նկարիչ:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված (պարտադիր նշե՛ք պետության պաշտոնական անվանումը):
բ. Ո՞վ է այդ կարգավիճակով պետության հիմնադիրը:

10. Ո՞ր նշանավոր գործիչն է պատկերված նկարի կենտրոնում՝ ծնկած դիրքով. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

1919 թ. վերջին լույս տեսած և աշխարհաքաղաքական իրավիճակը ցույց տվող ծաղրանկարի վերաբերյալ պատասխանե՛ք ստորև տրված հարցերին:

THE GAP IN THE BRIDGE.

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Նշե՛ք այդ պետության ղեկավարի անունը և ազգանունը նշված ժամանակաշրջանում:
գ. Ի՞նչ է խորհրդանշում կամուրջը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2022 թ.